# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Զորակ, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2013թվականի N 18-Ն

## ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 և 19 կետերի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնքում 2014 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

*1.* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական շինարարական նախագծին համաձայն նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**Հիմնական օբյեկտների համար՝**

ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

բ/ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000դր.

բ/բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000դր.

բ/գ) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար
35 000դր.

բ/դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000դր.

**Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

գ) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դր

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դր

*2,.* Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն:

՝ բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության
մասով:

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համանվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված
նորմերը:

*3.* Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500
դրամ:
*4.* Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 6250 դրամ:
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 6250 դրամ:
*5.* Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350դրամ մեկ քառակուսի մետրի համար:
բ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 200 000 դրամ:
գ) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 25 000
դրամ:
գ/ա) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 3000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:
*6.* Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/ խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
ա) Առևտրի օբյեկտների համար 25 000 դրամ
բ) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000
դրամ

գ) Բաղնիքների և սաունաների համար 200 000
դրամ

դ) Խաղատների կազմակերպման համար 500 000
դրամ

ե) Շահումով խաղերի կազմակերպման համար 250 000
դրամ

զ) Վիճակախաղերի կազմակերպման համար 100 000
դրամ:

*7.* Համայքնի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քառակուսի մետրի տեղական տուրքը
սահմանել.

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1000
դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500
դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար 1000 դրամ

դատարկ գովազդի վահանակի համար 700 դրամ

*8.* Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000
դրամ
*9.* Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10 000
դրամ:

*10.* Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական այլ համայնքներում հաշվարկվում են 0.5 գործակիցների կիրառմամբ:
**Տեղական վճարներ**
ա) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության

շահագործումը փոխանցելու համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ:

բ) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ:

գ) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 3 000 դրամ:

դ) Աղբահանության համար սահմանել դրույքաչափ 1 անձի համար 50 դրամ:

ե) Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -6

1. ԱԲԿԱՐՅԱՆ ԺՈՐԻԿ
2. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ
4. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈՄԻԿ
6. ՓՈՒՐԹՈՒՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ